ԱԶԳ **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ**

«Մ[illegible]» [illegible]

ՌՈՒՍԱՍՏԱՆ

# Լեբեդը կկարողանա՞ պայքարը հասցնել մինչեւ վերջ

*Ռուսաստանի ընտրություններում որոշիչ դեր խաղացած Ալեքսանդր Լեբեդի մասին օտար մամուլի դիտարկումները չափազանց հետաքրքիր են: Դրանցից այսօր թարգմանաբար ներկայացնում ենք Nesweek-ի մեկնաբանությունը*



[illegible]

ՀԱՄԱՌՈՏ

## Անատոլի Չուբայսը՝ Ռուսաստանի նախագահի վարչակազմի ղեկավար

ՄՈՍԿՎԱ, 15 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը իր վարչակազմի ղեկավար է նշանակել Անատոլի Չուբայսին, այդ պաշտոնից ազատելով Նիկոլայ Եգորովին: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, նախագահը Անատոլի Չուբայսին հանձնարարել է 12-օրյա ժամկետում առաջարկություններ նախապատրաստել նախագահի վարչակազմի կառույցը կատարելագործելու վերաբերյալ՝ նկատի առնելով վարչակազմի ղեկավարի եւ պետության ղեկավարի առաջին օգնականի պաշտոնների միավորումը:

## «Երիտասարդությունը հանուն Կովկասի խաղաղության» կոնֆերանս Բաքվում

ԵՐԵՎԱՆ, 15 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հուլիսի 18-21-ը Բաքվում տեղի կունենա «Երիտասարդությունը հանուն Կովկասի խաղաղության» կոնֆերանսը, ուր կլնարկվեն տարածաշրջանում հակամարտությունների կարգավորման եւ այլ հարցեր: Կոնֆերանսը կազմակերպել է վրաց-հայ-ավ-օսական համատեղ նախապատրաստական կոմիտեն: Միջոցառումը ֆինանսավորվում է Եվրոպայի Միության «ՏԱՍԻՍ-ժողովրդավարություն» ծրագրով, տեխնիկական կազմակերպումը կոորդինացնում է բրիտանական ոչ կառավարական «Վերտիկ» կազմակերպությունը: Կոնֆերանսի աշխատանքին կմասնակցեն Կովկասի տարածաշրջանի եւ արտասահմանյան երկրների երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

## Մուստաֆա Քալեմլին այցելում է Մոսկվա եւ Պետերբուրգ

ԱՆԿԱՐԱ, 15 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՌԴ Պետական դումայի նախագահ Գենադի Սելեզնյովի հրավերով յոթօրյա պաշտոնական այցով Ռուսաստան է ժամանում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Մուստաֆա Քալեմլին: Ինչպես հաղորդել է «Ժամանակ» օրաթերթը, Մուստաֆա Քալեմլին, որին ընկերակցում է խորհրդարանական պատվիրակությունը, հանդիպումներ կունենա Մոսկվայում եւ Սանկտ Պետերբուրգում: Ծրագրվում է, որ այսօր Քալեմլին կընդունի Պետդումայի նախագահ Սելեզնյովը: Այնուհետեւ Ազգային մեծ ժողովի նախագահը տեսակցություն կունենա Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովի հետ:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## Եվրոպայի ամենամաքուր լողափերը Հունաստանում են

Այս տարվա ամռանը բնապահպանական անվտանգության ամենաբարձր վարկանիշն ստացավ Հունաստանը: Նրա 1526 ծովափնյա գոտիների 98 տոկոսը համապատասխանում է առողջապահական չափանիշներին: Երկրորդ տեղում է Իսպանիան՝ 96 տոկոս: Նրան հաջորդում է Իռլանդիան, որը ունի ընդամենը 108 ծովափնյա գոտի: Մեծ Բրիտանիայի վարկանիշը կազմում է 89 տոկոս, Գերմանիայինը՝ 81: Աղյուսակում վերջին տեղերը զբաղեցնում են Ֆրանսիան եւ Հոլանդիան:

Այս տվյալները բերվում են եվրոպական միավորումների հանձնաժողովի ամենամյա զեկուցագրում, որը մանրամասն տեղեկություններ է տալիս լողափերի հարմարությունների, մաքրության եւ մյուս բնապահպանական գործոնների մասին: Արեւմտյան Եվրոպայի երկրների բազմաթիվ զբոսաշրջիկներ ճանապարհ ընկնելուց առաջ ծանոթանում են այդ տեղեկագրին եւ ըստ այդմ ընտրում երթուղին:

Եվրոպայի ներքին ջրամբարներում պատկերը նվազ բարենպաստ է: Աշխարհամասի գետերում եւ լճերում առավել շատ օգտագործվող 1700 գոտիների ավելի քան 30 տոկոսի վիճակը չի բավարարում նվազագույն սանիտարական նորմերի պահանջները: Հատկապես վտանգավոր է լողալ Լյուքսեմբուրգի եւ Իսպանիայի քաղցրահամ ջրավազաններում:

Հանձնաժողովի «Առողջարանային տեղեկատուի» 13-րդ հրատարակությունում թվարկված է լողի ընդամենը 18000 գոտի: Եվրամիության առողջապահական չափանիշների տեսանկյունից դրանցից ավելի քան 3000-ի վիճակը անբավարար է: Տեղեկատուն անմիջական ազդեցություն է գործում եվրոպական երկրների զբոսաշրջային բիզնեսի վրա. մարդիկ հանույքով մեկնում են այնտեղ, որտեղ շրջակա միջավայրի աղտոտվածությունը փոքր է:

«ՖԻՆԱՆՍԻԱԼ ԹԱՅՄՍ»

# Արաբիա. Արմատականներն ընդդեմ ԱՄՆ-ի եւ իշխող գահատոհմի

[illegible]

[illegible]

